ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԸ «ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Զմյուռնիայում «Ուսումնասեր» ընկերության գործունեության դադարումից հետո (1868) ականավոր հրապարակախոս և մանկավարժ Ստ. Ոսկանյանի հասարակական հայացքների մասին շատ քիչ բան է հայտնի. այն, որ «La Reforme»-ի[1] խմբագիրը հայ իրականությանն անդրադարձել է միայն Կոստանդյանի աշխատության դեմ գրած իր երկու գրքույկներով։ Վերջերս հայտնի դարձավ նաև, որ Ոսկանյանը 1883-ին Օրպել ծածկանունով աշխատակցել է «Արշալույս արարատյանին»[2]։

Սակայն, ինչպես փաստերն են հուշում, Ոսկանյանը «Արշալույս արարատյանում» հոդվածներով հանդես է եկել Օրպել ծածկանունով ստորագրելուց 12 տարի առաջ։

Հայտնի է, որ «Արևելք» և «Արևմուտք» հանդեսներում Ոսկանյանը գործածել է նաև Հրանտ ծածկանունը և ստորագրության եռաստղանիշ ձևը[3]։

«Արշալույս արարատյանի» էջերում ևս հանդիպում ենք Հրանտ ստորագրությամբ հինգ թղթակցության, որոնց ոճը հիշեցնում է Ստ. Ոսկանյանին[4]։ Այդ հոդվածներին անդրադառնալուց առաջ ավելացնենք, որ նույն տասնամյակի «Արշալույս արարատյանում» հանդիպում ենք եռաստղանիշ ստորագրությամբ երկու թղթակցության, որոնք ևս, մեր կարծիքով, պատկանում են Ստ. Ոսկանյանի գրչին[5]։

---

1 Դժբախտաբար, հայ բանասիրությանն առայժմ անմատչելի են այդ թերթի համարները, որոնց ուսումնասիրությունը անգնահատելի կլիներ Ոսկանյանի 1868—1901 թթ. շրջանի գաղափարախոսությունը արժեքավորելու տեսակետից։ Այդ պարբերականի մասին բավականաչափ տեղեկություններ կան Զմյուռնիայի անդրանիկ լրագրում։ „La Reforme"-ն տպագրվել է Թաթիկյան տպարանում։ Նրա պատասխանատուն մինչև 1874-ը վաճառական Խ. Աղազարյանն էր։ Այն նախ շաբաթաթերթ էր, իսկ 1875-ի փետրվարից դարձավ եռօրյա։ Թերթում Ոսկանյանը տպագրել է հայ իրականությանը վերաբերող բազմաթիվ լուրեր. այն ունեցել է քաղաքական իրադարձությունների լայն իրազեկություն, որ ցույց են տալիս դրանց արտատպություններն «Արշալույս արարատյանում» (1873, № 957, 1874, № 979, 1876, № 1033, 1879, № 1125 և այլն)։ Բացի այդ պարբերականից, 1870-ական թվականներին, Զմյուռնիայում հրատարակվում էր մի այլ հայերեն-ֆրանսերեն թերթ՝ „L'esprit du monde"-ն, որի խմբագիրն էր Գ. Ագճալյանը («Արշալույս արարատյան», 1874, № 994)։

2 Մ. Հակոբյան, «Արևմուտքի» նորահայտ համարը («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 148—167)։

3 Վ. Զարդարյան, Հիշատակարան, Հայ գաղութը և մամուլը Եվրոպայի մեջ, հ. Բ, № 13—14, Կահիրե, 1933, էջ 4։ «Արևելք», 1855, № 6, էջ 166—174։ «Արևմուտք», 1859, № 1, էջ 5—8, № 6, էջ 47—48։

4 «Արշալույս արարատյան», 1871, № 903, 904, 905, 1884, № 1336։

5 Նույն տեղում, 1872, № 941, 1879, № 1120—1122։

Հրանտի առաջին թղթակցության մեջ առաջադրվում են եկեղեցու բարոյական հեղինակությունը վերականգնելու խնդիրները։ Հեղինակն այս առթիվ խիստ քննադատում է կրոնական ժողովները և եկեղեցու հայրերին՝ իրենց իշխանությունը չարարկելու համար։ Քահանայական պաշտոնները շռայլելու, «մոլի և հոռի վարուք ճանչված» քահանային և տգետ քարոզչին հովանավորելու առթիվ հեղինակի սուր դիտողությունները բացահայտորեն հակադրվում են թերթի ավանդական դարձած չափավոր-զգույշ դիրքին։ Ինչ վերաբերում է թղթակցության բարեպաշտական խորհրդածություններին, ապա նախ պետք է նկատի ունենալ, որ 70-ական թվականներին ավելի քան երբեք, Ոսկանյանը ազգային-հասարակական որոշակի դեր էր հատկացնում կրոնին և այնուհետև, հենց այդ խորհրդածություններն են անցագիր ծառայել եկեղեցու հայրերի դեմ ուղղված հեղինակի քննադատության համար։ Ի դեպ, Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրի Մ ստորագրող թղթակցին, ի տարբերություն «Արշալույս արարատյանի» պահպանողականների, ամենևին էլ չէին ողոքել հիշյալ կրոնասիրական մտքերը։ Հրանտին նա ուղղակի մեղադրում էր «եկեղեցվո ուսմունքներուն նկատմամբ վերանորոգության և կամ փոփոխության» հանցանքի մեջ, որ և հերքում է Հրանտը իր մի համառոտ թղթակցության մեջ[6]։

Հրանտի երկրորդ թղթակցության մեջ առաջարկվում է լուրջ ուշադրություն դարձնել կնոջ մտավոր զարգացմանը և ձգտել «իգական սեռը բարձր դիտության հաղորդ ընելու» իրավունքին։ Այս նպատակով նա դիմում է Զմյուռնիայի «Հայ ընթերցատան» տնօրեններին՝ կանանց համար կազմակերպելու հրապարակային դասախոսություններ։ Անկասկած, կնոջ մտավոր և բարոյական վերածննդի նկատմամբ այսպիսի հետևողականությունը խորթ աննրդաշնակություն էր մտցնում կնոջ հասարակական կոչման մասին թերթի ունեցած ընդհանուր հայեցակետի մեջ։

Հրանտի երրորդ թղթակցության գաղափարները՝ հայաբնակ քաղաքներում ամուսնությունների թվի նվազելու, կանանց կրթության և դաստիարակության նոր արժեքների յուրացման մասին, արևմուտքին կապկելու սովորությունը դատապարտելը և ընտանիքը որպես կնոջ դաստիարակության առաջին և հիմնական օրրան դիտելը լիովին համապատասխանում են «Արևմուտքի» էջերում Ստ. Ոսկանյանի՝ կանանց դաստիարակության վերաբերյալ հոդվածի գաղափարներին։ Ուշագրավ է, որ այդ հոդվածում Ստ. Ոսկանյանը հայ կնոջը եվրոպական բարքերից հեռու պահելու նախանձախնդրությամբ ապավինում էր ազգային լավագույն ավանդույթներին՝ հայրենասիրությանն ու առաքինությանը։ «Ձեզ օրինակ են,—դիմում է նա հայ կանանց,— Եղիշեին նկարագրած արի տիկինները և հետո օտարազգի պեպեկները»[7]։ Դատապարտելով օտարամուտ հոռի բարքերը, Հրանտը գրեթե նույն կերպ է բնութագրում պճնասեր կանանց. «Արդ, եթե օրիորդները այսօրվան օրս մեյմեկ պեպեք կնկատվին, ասոր համար ավելի ծնողք մեղադրանաց արժանի են»[8]։ Ավելացնենք, որ և՛ Ստ. Ոսկանյանը, և՛ Հրանտը հայ կնոջը չեն ամփոփում զուտ ազգային դաստիարակության շրջանակներում. ընդհակառակն, «Արևմուտքի» այդ նույն հոդվածում Ստ. Ոսկանյանը առաջադրում է եվրոպացի կնոջ

6 Նույն տեղում, 1871, № 905։

7 «Արևմուտք», 1859, № 18, էջ 141 (այս և հետագա ընդգծումները բնագրային են—Ա. Խ.)։

8 «Արշալույս արարատյան», 1871, № 905։

հոգևոր, բարոյական և մտավոր հարստություններին հաղորդակցվելու խնդիրը («Հայ կիներ, սկսենք նախ Եվրոպայի ազնիվ կիներու սիրտը, միտքը, վեհ զգայությունները ընդունիլ»)։ Հրանտը ևս իր լսարանին է հանձնարարում եվրոպական «ողջամիտ ու առաքինի» դաստիարակության սկզբունքներ պարունակող գրքերը։ «Արշալույս արարատյանում» Հրանտ ծածկանունը գործածելը հաստատուն է դառնում նաև այն հանգամանքով, որ նույն անվամբ, Ստ. Ոսկանյանը, ինչպես ասվեց, ստորագրել է իր պարբերականներում։

Անվերապահորեն նույնը չենք կարող ասել նշված եռաստղանիշով հոդվածների մասին, որովհետև ժամանակի հայ բազմաթիվ պարբերականներում և նույն «Արշալույս արարատյանում» կան այդպիսի ստորագրությամբ շատ հոդվածներ, որոնք, բնականաբար, ոչ մի առնչություն չունեն Ստ. Ոսկանյանի հետ։

Աստղակիր ստորագրությամբ առաջին հոդվածը, որ, մեր կարծիքով, պատկանում է Ստ. Ոսկանյանի գրչին, տպագրվել է թերթի 1872 թ. № 941-ում, «Դիտողություն մը» վերնագրով։ Հոդվածում շարադրված են հեղինակի լուսավորական ըմբռնումները, ինչպես և կոնկրետ ծրագիրը՝ զմյուռնահայ վարժարանների ուսումնա-կրթական զարգացումն ապահովելու համար։ Հեղինակի ինքնությունը բացահայտելու համար համեմատենք նշված հոդվածի դրույթները «Արշալույս արարատյանում» տպագրված «Ուսումնասեր» ընկերության հայտարարության հետ, որ տարիներ առաջ գրել էր Ստ. Ոսկանյանը[9]։ Ի դեպ, այդ հայտարարությունը մեզ հայտնի վերջին այն վավերագրերից է, որտեղ շարադրված են Ստ. Ոսկանյանի լուսավորական-մանկավարժական ըմբռնումները, ուստի և համեմատվող եզրերի միջև եղած խրզումը, ժամանակի իմաստով, հասցված է նվազագույնի։ Այստեղ բնութագրելով լուսավորություն հասկացությունը և դրա խնդիրները, Ստ. Ոսկանյանը նշում է, թե «Լուսավորության նպատակը ուրիշ բան չկրնար սեպվիլ, եթե ոչ ազնիվ մարդիկ պատրաստել»։ Նույն բանաձևմանը, փոքր-ինչ ընդգծված հոմանիշներով, հանդիպում ենք «Դիտողություն մը» թղթակցության մեջ. «Եվ ի՞նչ է դպրոցը, բայց եթե մարդկությունը ազնվացնելու, վեհացնելու, ճոխացնելու և անոնց իր պարտավորությանց ծանոթացնելու միակ շարժառիթը»— գրում է եռաստղանիշ հեղինակը[10]։

Հայտարարությունը հրապարակելու միջոցներին Մեսրոպի և Սահակի տոնախմբության առթիվ կարդացած իր ատենախոսության մեջ Ստ. Ոսկանյանը «Ուսումնասեր» ընկերության հիմնական խնդիրներն էր համարում վարժարանների նյութական, մտավոր և բարոյական վիճակի բարվոքումը։ Այլ կերպ ասած՝ նա պահանջում էր վարժարաններին արամադրվելիք դրամական կանոնավոր և բավարար հատկացումների իրականացում, որով ընկերությունը հիմնովին փոխելու էր հնացած մանկավարժական, կրթական համակարգն ու մեթոդը։ «Դիտողություն մը» հոդվածում ևս ամենակարևորն ու առաջնայինը համարվում են «այն ամեն կարգադրությունները, որք վարժարանին արդյունավետության շարժառիթներն են. այսինքն՝ վարժարանին ծախսը գոցող գումարի մը անհրաժեշտ ապահովիլը, գործունյա և բանիբուն դասատվաց քաջ ընտրություն մը, բեղմնավոր կանոնադրության մը անթերի գործադրություն և որ ամենեն նշանավորն է՝ դպրոցին ներքին կառավարությանց...»։

9 «Արշալույս արարատյան», 1866, № 772։

10 Նույն տեղում, 1872, № 941։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս առաջ են քաշվում նույն երեք գործոնները՝ նյութականը, մտավորը («գործունյա և բանիբուն դասատվաց քաջ ընտրություն մը») և բարոյականը (դպրոցի ներքին կառավարումը)։ Դպրոցական բարեկարգման այս երկու ծրագրերը բովանդակությամբ գրեթե չեն զանազանվում միմյանցից։ Տարբերությունն այն է միայն, որ ատենախոսության մեջ Ստ. Ոսկանյանը ամենայն խստությամբ մերժում էր զմյուռնահայ վարժարաններում արմատացած հնօրյա «տիրացուական» մտամարզանքները, իսկ այստեղ «ապարդյուն վարժապետներին»։ Ինչ վերաբերում է մանկավարժական մեթոդներին, ապա եռաստղանիշ թղթակիցը հազիվ թե սկզբունքային առարկություններ ունենար, քանի որ վարժարանների տեսուչն այդ ժամանակ Մ. Մամուրյանն էր, որի մանկավարժական շնորհների մասին ակնածանքով է արտահայտվում հիշյալ հեղինակը։

Ժամանակին «Ուսումնասերի» ատենապետը սկզբունքային պայքար էր մղում զմյուռնահայ վարժարանների կանոնադրությունը ազդեցիկ այս կամ այն դրամատիրոջ քմահաճույքներով փոխարինելու սովորության դեմ։ Վերոհիշյալ ատենախոսության մեջ Ստ. Ոսկանյանը իր տհաճությունն էր հայտնում «մասնավոր անձերի խնամքից»։ Ճիշտ նույն ոգով «Դիտողություն մը» հոդվածի հեղինակը ցանկություն էր հայտնում, որ վարժարանների տեսուչը[11] «չէ թե այսինչ աղային կամ այնինչ էֆենտիին բացատրություններ տալու կամ անոնց քմաց համաձայն շարժելու պարտավոր ըլլա, հապա իր վարժարանին նկատմամբ ընդհանուր գործոց ցուցակը քաղաքական ժողովո կամ Ազգային վարչությունը ներկայացնող անձանց վրա»[12]։

«Արշալույս արարատյանի» նյութերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ղ. Պալդազարյանի խմբագիր լինելու ամբողջ ժամանակամիջոցում[13] (1840—1878) թերթը միայն երկու անգամ է հանդգնել վարժարանները աղաների ինքնիշխանությունից ազատելու առաջարկ անել. առաջինի հեղինակը, ինչպես տեսանք, Ստ. Ոսկանյանն էր, իսկ մյուսինը՝ եռաստղանիշ հեղինակը։ Եվ վերջապես, «Ուսումնասեր» ընկերության հայտարարությունը և «Դիտողություն մը» հոդվածը ավարտվում են գրեթե նույն կերպ, որ երկու հեղինակների մտահոգությունների ընդհանրությունից բացի, ցույց է տալիս նաև նրանց ոճի նույնությունը։ Իրենց մանկավարժական ըմբռնումներն ու ծրագրերը շարադրելուց հետո երկու հեղինակներն էլ հանկարծ կտրուկ թողնում են երևույթների վերլուծության հայեցողական ձևն ու անմիջականորեն դիմում հանրությանը. «Անմիությունը և կռիվը,— գրում է Ստ. Ոսկանյանը,— ձեր իյնալուն և ետ մնալուն պատճառ եղան. եթե հիմա միաբիրտ կամքով սուրբ Մեսրոպի տունը (ս. Մեսրոպյան վարժարանը— Ա. Խ.) ձեզ ասպարեզ ընտրեք և անկե ետքը տգիտության դեմ միայն կռվիլ որոշեք, մի տարակուսիք, որ մեր ողորմելի հայրենիքը ձեզ երախտագետ պիտի ըլլա։ Ազգի մը առաջին պարծանքը միտքի արդյունքներ են»[14]։

---

11 Զմյուռնիայի Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարաններն ունեին միևնույն տեսությունը։

12 «Արշալույս արարատյան», 1872, № 941։

13 Ղ. Պալդազարյանի մահից հետո շուրջ մեկ տարի թերթի խմբագիրն էր Տ. Սավալանյանը (1878 ապրիլ-մայիս—1879 ապրիլ), որին թերթի № 1118-ից սկսած փոխարինում է Հ. Սվաճյանը (1879-ի մայիսից)՝ «Մասիս», 1879, № 2349։

14 «Արշալույս արարատյան», 1866, № 772։

«Դիտողություն մը» հոդվածի հեղինակը իր հերթին գրում է. «Ամեն ոք կխոսի, ամեն ոք կձևե ուզածին պես, բայց մի գոռաք, մի գոչեք, գոռում-գոչումով ձեր նպատակին չպիտի հասնիք երբեք, հապա ձեռք-ձեռքի տալով աշխատեցեք դարման տանելու իրաց վիճակին, քանի որ կփափաքիք ավելի ընտիր սերունդ պատրաստելու ազգին»[15]։

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ կոչ է արվում ժողովրդին՝ թողնել տարաձայնությունները և համախմբվել հանուն ազգային լուսավորության։ Ազգային լուսավորությունը համարվում է ժողովրդի առաջնային նպատակը։ Կարծում ենք, որ այս ընդհանրությունները վկայում են եռաստղանիշ թղթակցի՝ Ստ. Ոսկանյանը լինելու իրողությունը։ Ստ. Ոսկանյանի հեղինակության արդյունք պետք է համարել նաև նույնպիսի եռաստղանիշ ստորագրությամբ «Արշալույս արարատյանում» տպագրված «Դպրոցական բարվոքում» հոդվածը[16]։ Հեղինակն այս անգամ ևս առաջադրում է ժամանակակից պահանջներին համապատասխան նորօրյա դասացանկի և արժանավոր ուսուցիչների խնդիրը։ Այս և Ստ. Ոսկանյանի՝ մեր արդեն քննարկած հոդվածների բովանդակության ընդհանրությունը նշելով հանդերձ, նկատենք, որ այստեղ առավել հետաքրքիր են այլ հանգամանքներ։ Ինչպես հայտնի է, Կոստանդյանին հերքող իր գրքույկները Ոսկանյանը գրել էր ֆրանսերեն, որոնք մատչելի չէին ընթերցողների լայն շրջաններին։ Ուրեմն, եթե Ոսկանյանը չէր թարգմանելու, ապա համենայն դեպս, մայրենի լեզվով այս կամ այն կերպ պետք է անդրադառնար դրանց, քանի որ այդ գրքույկները փաստորեն նախատեսված էին հայ լսարանի համար։ Հիշենք, որ 1878-ին Ոսկանյանին հայերենով ելույթի էին հորդորում և՛ «Արշալույս արարատյանի» պահպանողականները, և՛ Զմյուռնիայի լատին համայնքի հոգևոր պետը՝ արքեպ. Սպակապիետրան՝ ժողովրդին «անկրոնության» դեմ յուրովի պատվաստ անելու համար[17]։

Իսկապես, հենց նույն ժամանակներում էր, որ «Արշալույս արարատյանը» տպագրել է «Դպրոցական բարվոքում» հոդվածը, որտեղ հեղինակը Ոսկանյանի ոճով մարտնչում է Գ. Կոստանդյանի դեմ։ «Իմաստակները,— գրում է նա,— երբեմն կճառեն, նաև կգրեն, ուրիշ իմաստակներ կհիանան, ասոնց ամենուն ալ նպատակը գրեթե միօրինակ է՝ ժողովրդային հին դրությունները չեն հավնիր, կթշնամանեն զանոնք և նոր հավատք ու նոր կրոն կքարոզեն՝ ցուցունելու համար, թե միլիոնավոր մարդերե բազկացյալ ազգի մը հառաջադիմության միջոցներն իրենք միայն գիտեն, առանց գիտնալու սակայն իրենց քարոզի չափն ու աստիճանը։ Իմաստակին համար ամենադյուրին գործ մ՝ է ամբողջ ազգի մը Նազովրեցիին գիրքեն հեռանալով Օկյուսթ Գոնթի կամ ուրիշ ավելի մեծ վիլիսոփայի մը դրության դավանիլը, առանց սակայն խորհելու, որ Հիսուսի օրենքը հառաջադիմության արգելք մը չըլլալե զատ՝ լուսավորության օժանդակ է... Ապացույց մեր ըսածին՝ քրիստոնեության հետ

15 Նույն տեղում, 1872, № 941 (ընդգծումները մերն են—Ա. Խ.)։

16 Նույն տեղում, 1879, № 1120—1122։

17 Նույն տեղում, 1878, № 1103 և 1108։ Այնքան մեծ էր Գ. Կոստանդյանի գրքի առաջացրած իրարանցումը Զմյուռնիայի պահպանողական շրջաններում, որ 1878-ի աշնանը հայ համայնքի կրոնական ժողովը մի քանի նիստեր է նվիրել այդ հարցին. ի վերջո, այդ ժողովի նախագահ Մելքիսեդեկ Մուրատյանցը հանգստացրել է կրքերը, նկատելով թե «դրան կարևորություն պետք չէ տալ» (նույն տեղում, № 1108)։

խղճի ազատության կրոնը պաշտող եվրոպական ազգեր, որոնց մեջ կգտնվին իմաստակաց աչքը շլացնող Օկյուսթ Գոնթ՝ փիլիսոփայից թզուկը և Քանդ, Նեվթն, Վոլթեր՝ փիլիսոփայից հսկայները»[18]։

Ընդարձակ այս մեջբերումը ուշագրավ է երկու առումով. նախ նկատենք, որ հակառակ թերթի պահպանողականների, որոնց ելույթները Կոստանդյանի դեմ սոսկ հայհոյական հարձակումներ են և անզուսպ զայրույթի արդյունք, Եռաստղանիշով ստորագրողը հիմնավորում է իր ընդդիմախոսությունը, ընդ որում, քաղաքակրթության առաջընթացին նպաստող կրոնի դերի ընդգծումով, ճիշտ նույն հայեցակետը, ինչ տեսնում ենք Ոսկանյանի «Օկյուսթ Գոնթը Զմյուռնիայում և անաստվածություն» գրքույկում[19]։

Այնուհետև, առկա է թղթակցի մեծ ակնածանքը Կանտի նկատմամբ, որ նա չի թաքցնում նաև քիչ անց. «Ստույգ է,— գրում է նա,— թե Գերմանիայի՝ Գաղղիո դեմ տարած հաղթանակը Քանդի ուսերուն վրա կփայլի»[20]։ XIX դ. արևմտահայ հրապարակախոսներից Կանտին այսպես անվերապահորեն մեծարել է միայն Ստ. Ոսկանյանը և այն էլ՝ սկսած 1850-ական թվականներից։ Եռաստղանիշ ստորագրությամբ թղթակցության հեղինակից դեռևս 20 տարի առաջ, հերքելով իրեն կոմունիստ համարելը, նա գրում է. «Քանթի աշակերտ մը (նկատի ունի իրեն— Ա. Խ.) Քապեին սին դրությունը չկրնար ընդունիլ երբեք»[21]։

Մի քանի տարի անց Ոսկանյանը կրկնում էր՝ «Քանդը կդավանենք միշտ փիլիսոփայներու փիլիսոփա»[22], իսկ «Օկյուսթ Գոնթը Զմյուռնիայում և անաստվածություն» գրքույկում ուղղակի նշում է, թե «Կանտը գերմանական փիլիսոփայության հիմնադիրն ու ժամանակակից առաջին մտածողն է»[23]։

Եռաստղանիշ ստորագրությամբ թղթակցությունները Ոսկանյանի հեղինակությունը լինելու փաստն է վկայում նաև հետևյալը. դեռևս 50-ական թվականներին վճռականորեն ժխտելով ազգը հյուծող դավանական ներհակությունները, Ոսկանյանը նկատում էր, որ ի հակադրություն արևելքի, քաղաքակրթության ավելի բարձր աստիճանի հասած արևմուտքը վաղուց ի վեր մերժել է կրոնական կռիվները՝ ապավինելով լուսավորությանը. «Եթե արևմտյան ժողովուրդները կրոնական կռիվներե չհրաժարեին և դարերով արյուն թափելե ետև չհամոզվեին, որ անկե ոչ բարոյական, և ոչ նյութական բարօրություն մը կրնա ծագիլ երբեք, հիմա ի՞նչ տարբերություն կունենար Եվրոպա՝ Ասիայեն»[24],— գրում էր նա։

---

18 Նույն տեղում, 1879, № 1122։

19 Մ. Հակոբյան, Գալուստ Կոստանդյանը, Ստեփան Ոսկանյանը և էմիլ Լիթրեն («Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 1, էջ 138)։

20 «Արշալույս արարատյան», 1879, № 1122։

21 «Արևմուտք», 1859, № 17, էջ 130։

22 «Արշալույս արարատյան», 1866, № 782։ Այս դարձվածից հետո Ոսկանյանը անմիջապես ավելացնում է. «Բայց կտեսնենք, որ իր վահանը քիչ մը ծակված է և տգիտության դեմ ծակված վահան գործածել մեծ խոհեմություն չթվիր մեզ»։ Այս հավելումը ամենևին էլ չի բացառում Ոսկանյանի՝ Կանտին, որպես փիլիսոփայի երկրպագելը։ Պարզապես Ոսկանյանը կարծում է, որ Կանտի հայեցողական իդեալիզմը չի հարմարվում «Ուսումնասերի» գործնական ջանքերին։ Եվ Ոսկանյանը հենց այդպես էլ բացատրում է իր վերապահումը. «Ինչո՞ւ. վասնզի այսօր ուսումնասիրության և ազգասիրության վրա հիմնված ընկերություն մը («Ուսումնասերը»—Ա. Խ.) սեզմե կխնդրե, որ գործադրության ձեռք զարնեմք և արդյունք ցույց տանք»։

23 Մ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 139։

24 «Արևմուտք», 1859, № 2, էջ 12։

«Դպրոցական բարվոքում» հոդվածում իր հերթին թղթակիցը կրկնում է նույն միտքը. «Դարավոր փորձեր կապացուցանեն, որ իմաստակությունը ազգեր և ժողովուրդներ փճացուցած է, կրոնի փիլիսոփայության անհասկացողությունը Ավարայրի դաշտը արյամբ ոռոգեց։ Ս. Պետրոսի՝ Հռոմի մեջ հաստատած աթոռին գաղափարը, որ քրիստոնեության հետ առնչություն մի չունի, պապական անսխալությունը հետևցուց... կրոնական խստություններ պատճառեց, հավատաքննության դուռեր բացավ, Լուտեր մը ծնավ, որ հանուն կրոնի ազգերը բաժնեց»[25]։

Այսպիսով, եթե «Արևմուտքում» Ոսկանյանը թռուցիկ նշում և դատապարտում էր արևմուտքի ժողովուրդների կրոնական վաղեմի կռիվները, ապա «Արշալույս արարատյանում» եռաստղանիշ թղթակիցը մատնացույց էր անում այդ կռիվների չարաղետ հետևանքները։ Այնուհետև վերջինս պարսից նվաճողական քաղաքականության կրոնական միտումները դատապարտում է հենց միևնույն հայեցակետից, ինչ Ոսկանյանը՝ արևմուտքի կրոնական կռիվները։

Եռաստղանիշ հեղինակը անդրադառնում է 1866—1868 թթ. Ոսկանյանի գլխավորած «Ուսումնասեր» ընկերությանը. «1866-ին,—գրում է նա,— «Ուսումնասեր» ընկերություն մը հաստատվեցավ, որ առաջին անգամ վարժարանաց բարվոքման և գիտության ծավալումի համար դրամական պիտոյից խնդիր հղացավ, բայց առանց ծնելու մեռավ՝ լուսո անհաշտ թշնամիներու հարվածեն վիրավորվելով»[26]։ Անտարակույս, «Ուսումնասերի» մասին խորհրդածություններ կարող էր անել ոչ միայն Ոսկանյանը։ Սակայն այդ ընկերության մեծարումը, դառնության շաքողված տրամադրությունները՝ «Ուսումնասերի» չիրականացած հնարավորությունների մասին, իրավունք են տալիս մի անգամ ևս նկատելու, որ վերհուշի հեղինակը ինքը՝ Ոսկանյանն էր։

Ի նպաստ եռաստղանիշի՝ Ոսկանյանը լինելու մեր համոզմունքի, պետք է նկատել, որ այդ հրապարակախոսը տարիներ առաջ ևս առիթ էր ունեցել հանձնվելու ճիշտ նույնպիսի դառն խորհրդածությունների։ 1859-ի սկզբներին հայտնելով հետադիմականների ձեռքով Փարիզում ծրագրվելիք «Արարատյան» ընկերության ձախողման մասին, նա գրում էր. «Այո, մեր ընկերությունը չծնած մեռավ»[27]։ «Ուսումնասեր» ընկերությունը... առանց ծնելու մեռավ»,— գրեթե բառացիորեն այստեղ կրկնում է նրան եռաստղանիշ թղթակիցը։

Առհասարակ, 70-ական թվականներին և՛ Հրանտը, և՛ եռաստղանիշ ստորագրությամբ նամակների հեղինակը հիմնականում իրենց մտորումները կենտրոնացնում են ազգային լուսավորության և կրթության խնդրի վրա, խնդիր, որ մշտապես զբաղեցրել է Ոսկանյանին[28]։

---

25 «Արշալույս արարատյան», 1879, № 1122։

26 Նույն տեղում, № 1120։

27 «Արևմուտք», 1859, № 20, էջ 155։

28 Նկատի առնելով զմյուռնահայ լուսավորական շարժումների մասին մեր հոդվածը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 1, էջ 227—236), Մ. Հակոբյանն առանց որևէ փաստ մատնացույց անելու, մեզ մեղադրում է «սխալ մեկնաբանումների և աղավաղումների մեջ», ավելացնելով, թե դրանց ինքը «անդրադարձել է առանձին» («Էրեբեր», 1972, № 9, էջ 21)։ Թե որտե՞ղ և ե՞րբ՝ Հակոբյանը չի նշում իր աղբյուրը և չէր էլ կարող, որովհետև այդպիսին գոյություն չունի։

Նոաստղանիշով նամակների հեղինակը, իսկապես, առաջադիմական հայացքներ ունի ազգային կրթության նպատակների, բովանդակության վերաբերյալ, ընդգծում է դրական գիտությունների և գործնական ուսուցման նշանակությունը վարժարաններում, քննադատում է գոսացած մանկավարժական մեթոդները, որ հազիվ թե հաճույք պատճառեր պահպանողականներին։ Այսպես, այդ թղթակիցը ծաղր ու ծանակի էր ենթարկում հին դպրոցի ծրագիրը, «այսինքն՝ հայկաբանություն, քիչ մը թվաբանություն, աշխարհագրության թափթփուք, կես մը ազգային պատմություն, քրիստոնեական վարդապետություն, կտոր մը լեզվագիտություն և գլխավորապես տիրացություն»[29]։ Քննադատությունն այստեղ արվում է ճիշտ նույն ոգով, որով հագեցած էին Ոսկանյանի ատենախոսությունները 1866-ի գարնանը՝ զմյուռնահայ դպրոցների «իմաստակ ուսման մասին»[30]։

Օրպել ստորագրությամբ Ստ. Ոսկանյանի հոդվածներն «Արշալույս արարատյանի» էջերում[31] օգնում են բացահայտելու նրա մի այլ ծածկանունը։ Օրպելին բնորոշ գրելաձևը և հասարակական հետաքրքրությունների միևնույն շրջանակն ունի Թերթի Սուրեն անվամբ թղթակիցը[32]։ Իր առաջին թղթակցության մեջ նա գոհունակություն է արտահայտում Թերթի վերահրատարակման առթիվ։ «Անսայթաք հարատևություն» մաղթելով «Արշալույսին», Սուրենը գրում է. «Ձեր (Հ. Սվաճյանի— Ա. Խ.) ներողամտությունը կխնդրեմ, եթե երբեք իմ գրությունները պարունակած են կետեր «Արշալույսի» դադարման տեղի տալու։ Իրավ է, որ այդ պարագայի մեջ կրնայիք հայտնել իմ անուն և աղատել պատիժե, բայց... դուք օրենքին ձեզի տված ամեն իրավանց անխրտիր պահանջողներեն չեք»[33]։

Ինչպես տեսնում ենք, Սուրենը կասկածում է, որ իր գրություններն են եղել «Արշալույս արարատյանի» խափանման պատճառը[34]։ Ցավոք, մեր տրամադրության տակ չկան Թերթի այդ շրջանի համարները, ուստի ստիպված ենք բավարարվել երկու ենթադրությամբ. կամ Սուրենի խափանառիթ հոդվածը գտնվում է այդ պակասող համարների մեջ կամ էլ այդ հեղինակը առաջին անգամ է հանդես գալիս Սուրեն անվամբ (1884-ի № 1287-ում), բայց դրանից առաջ տպագրվել է մի այլ ծածկանունով։ Այս տեսակետից մոտենալով խնդրին, շատ հավանական է, որ այդ շրջանում Թերթի դադարման պատճառ կարող էին լինել նաև Օրպելի թղթակցությունները, որոնք խիստ քննադատության են ենթարկում արևմտահայ հետադիմությանը, մասնավորապես Կ. Պոլսի երեսփոխանական ժողովի գործունեությունը։ Կարևոր է նաև այն, որ անգամ խմբագիր Հ. Սվաճյանը հեռու էր բացասման ու քննադատության այնպիսի պաթոսից, ինչ հատուկ էր Օրպելի հիշյալ թղթակցություններին։ Ամենայն հավանականությամբ, հակառակորդները ըմբռնել են այդ թղթակցությունների վտանգը. Օրպելի վերջին նամակը ավարտվում է «Շարն ընդ

29 «Արշալույս արարատյան», 1879, № 1120։

30 Նույն տեղում, 1866, № 772, 783։

31 Նույն տեղում, 1883, № 1225, 1227, 1230, 1234, 1235, 1237։

32 Նույն տեղում, 1884, № 1287, 1303, 1304, 1329, 1339։

33 Նույն տեղում, № 1287։

34 Թերթի լրիվ հավաքածուն մեր ձեռքի տակ չլինելու պատճառով հնարավոր չեղավ որոշել այդ դադարման ճշգրիտ ժամանակը, սակայն պարզեցինք, որ այն չի հրատարակվել շուրջ մեկ շաբաթ՝ 1884-ի մարտի 1—մայիսի 26-ի հատվածում։

հուպ»[35] խոստումով, բայց շարունակությունը թերթի հաջորդ համարներում չկա։

Թերթում տպագրված իր երկրորդ նամակում Օրպելը սուր հարձակումներ գործելով Կ. Պոլսի Ազգային ժողովի վրա, ծանակում է Ներսես պատրիարքի հակառակորդներ Ստ. Փափազյանին, Հ. Ալաճաճյանին և Ա. Սուրենյանին, «Ղալաթիո օճախ» կոչված «կուսակցությանը»։ Օրպելը շեշտը դնում է վերջինի բնութագրական մի գծի՝ երեսպաշտության վրա. «... Ազգային շահերու և աղքատին իրավանց պաշտպան... այս մարդիկ,— հեգնում է նա,— ո՛չ ամչցած են, և ո՛չ խպնած և ամեն նշաններե կերևի, որ ասկեց ետքն ալ ո՛չ ամչնալիք ունին և ո՛չ խպնելիք...»[36]։ Իր հերթին Սուրենը քողազերծում էր «օճախի» երեսփոխաններին, որոնք «խոսում են ռամիկ ժողովրդյան դյուրազգածությունը գրգռելու եղանակավ» և կամ՝ «իբրև ժողովրդային փայլիլ կնկրտին», այսինքն՝ բացահայտում է «օճախի» հասարակական նույն վարքագիծը՝ կեղծավորությունը, ինչ Օրպելը[37]։

Նույն խմբակցության մարդկանց Օրպելն անվանում է «անօրինակ թափթփուքներ», որոնց դեմ «ժողովրդային դժգոհության ցույցեր, լրագրերու հրատարակություններ և կշտամբանք... արդյո՞ք փոքր-ինչ ազդեցություն պիտի գործեն այդ ինքնակոչ անձնվերներու վրա... քավ լիցի, և ես տարակույս չունիմ, որ... վերջը հետինն չար, քան զառաջինն պիտի ըլլա»[38]։

Ազգային ժողովն այս մարդկանցից մաքրելու հնարավորությանը հար և նման թերահավատությամբ էր վերաբերվում նաև Սուրենը, նկատելով, թե նրանց «Ազգը հավիտյան իր գործոց մեջ պաշտոնյա տեսնելու դժբախտությունն ունի»[39]։

«Մեր արդի վիճակը» վերնագրով թղթակցության մեջ Օրպելը ազգային-քաղաքական տխուր իրականության պատճառներից է համարում «օտարին չարկամությունը», հայ կղերի անկյալ վիճակը՝ «մահամերձ էջմիածինը», Երուսաղեմի պարտքը, և վերջապես Սիսը, որը Կ. Պոլսի «շահասեր անձերի» աջակցությամբ դարձել էր «ողորմելի ասպարեզ գոռոզ փառասիրության, ատիթ հերձվածի»[40]։

Ազգային-հասարակական անցուդարձի մասին խորհրդածող Սուրենը, ևս քննարկում է նույն խնդիրները և հանգում գրեթե բառացիորեն նույն եզրակացության. «Ազգը տարբեր երկիրներու մեջ ցրված, մեկ կողմեն օտարին քաղաքական դավերը, մյուս կողմեն անարժան կրոնավորները, ասդին Սիսի կաթողիկոսը, անդին արծաթապաշտ պաշտոնյաները կսպառնան հերձվածի բաժնելու զայն»[41]։

Երկու հրապարակախոսներն էլ չափազանց հիվանդագին էին զգում հետադիմության մշտական շնչառությունն իրենց թիկունքին, գրչի կաշկանդված վիճակը։ «Ավելի լռելու ժամանակ է, քան գրելու, եթե չես ուզեր վնասվիլ»,— գանգատվում էր Օրպելը[42]։ «Լավագույն եղանակ է՝ փոքր-ինչ մեղմել

35 «Արշալույս արարատյան», 1883, № 1237։
36 Նույն տեղում, 1883, № 1227։
37 Նույն տեղում, 1884, № 1339։
38 Նույն տեղում, 1883, № 1227։
39 Նույն տեղում, 1884, № 1304։
40 Նույն տեղում, 1883, № 1230։
41 Նույն տեղում, 1884, № 1303։
42 Նույն տեղում, 1883, № 1225։

լեզու և բերան»[43], «խոհեմություն է այժմ լռություն պահել»[44], «Պետք է լռել՝ բարոյական հաղթության կամարին ներքև կանգ առնելով», քանիցս երկրորդում է նրան Սուրենը[45]։

Խոնարհվելով աղատ խոսքի բարոյական մեծ նշանակության առջև, Օրպելը ցավով նշում է, որ իրականության մեջ այն չնչին ուժ է նյութականի, առարկայականի համեմատությամբ. «Իրավ է, որ նյութական ծառայությունները միշտ սիրով և շնորհակալությամբ կընդունվին, բայց ո՞ւր գտնելու է այդ անիրավ նյութը, որ միշտ պաշտված տեղը կդիմե և որով միայն կարելի է նյութապաշտ ժողովուրդի մը սանձ դնել... Խոսելու և դրելու համար ալ դարձյալ այն անիրավության (նյութին հասկցիր) կկարոտինք»[46],— գրում է նա։

Բարոյականության և նյութի նույնպիսի հակադրություն ենք գտնում նաև Սուրենի մտորումներում՝ «Նպատակ մը պաշտպանել՝ չկրնար դատապարտելի լինել, բավական է, որ ուղիղ սկզբունք մ՝ ունենա իրեն հիմ և ոչ թե նյութ... Դժբախտաբար, կան անձեր, որ ավելի նյութին՝ իրեն կհարին, քան թե անոր ներքին արժեքին և անոր բարոյական հարգին ու օգտակարության»[47]։

Նյութամոլության բերած ավերումների դեմ ժամանակին նույնպիսի կրքոտությամբ էր ծառանում նաև Ստ. Ոսկանյանը. «Նյութամոլ կյանքի հետեանքները այնպիսի ապականություն մը ծավալեր են հիմա, որ վտանգի զանդակը հնչելու ժամը եկած կսեպենք»,— գրում է նա և քիչ անց կրկնում՝ «Նյութամոլ կյանքի վայելքը կտանի հանբանություն»[48]։

Սուրենի և Օրպելի հայացքների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու թղթակիցներն էլ քննադատում են վերնախավի շահերը պաշտպանող երեսփոխաններին, կղերի անկյալ վիճակը, ցարիզմի և Թուրքիայի ազգային ձնշումները և «Պոլոժենիեն», ջերմորեն պաշտպանում են Ն. Վարժապետյան պատրիարքին, կողմնակից են արևմտահայերի «կեդրոնացման» սկզբունքին (գավառի բարոյական ենթարկվածությունը կենտրոնին), այլև ազգի տարանջատ հատվածների բարոյական-հոգևոր միասնությանը։ Եվ վերջապես, այս թղթակիցներին միավորում է հրապարակախոսական միևնույն թեման՝ բացառապես արևմտահայ հասարակական կյանքը։ Ուստի, Օրպելի և Սուրենի (որ նույնն է՝ Ստ. Ոսկանյանի) այս հոդվածները թեմատիկ-գաղափարական տեսակետից պետք է դիտել իբրև միասնական մի ամբողջություն։

Սուրենի՝ Ստ. Ոսկանյանը լինելու օգտին է խոսում նաև Հրանտի անակնկալ հայտնությունը «Արշալույսի» էջերում[49]։ Այս ծածկանունը, որ Ոսկանյանը չէր գործածել այդ թերթում 1871-ից ի վեր, իր հերթին ևս լույս է սփռում խնդրի վրա։ Իր նախավերջին հոդվածում Սուրենը քննարկում է պատրիարքական և կաթողիկոսական ընտրությունները և այս կապակցությամբ քննադատում Մամուրյանին, որը պայքարում էր Ներսեսի թեկնածու-

43 Նույն տեղում, 1884, № 1303։
44 Նույն տեղում, № 1287։
45 Նույն տեղում, № 1303։
46 Նույն տեղում, 1883, № 1225։
47 Նույն տեղում, 1884, № 1339։
48 «Արևմուտք», 1859, № 18, էջ 141։
49 «Արշալույս արարատյան», 1884, № 1336։

թյան դեմ։ Նա պաշտպանում է Ներսեսի շարունակական հրաժարականները և դրանք բացատրում նրա առողջական վիճակով[50]։

Հրանտի նամակը սկսվում է Կ. Պոլսի նոր պատրիարք ընտրելու իրարանցման, խմբակցությունների պայքարի և թեկնածուների մասին տեղեկություններով։ Սուրենի նամակի և Հրանտի թղթակցության համադրումը ցույց է տալիս, որ վերջինը առաջինի օրգանական շարունակությունն է արևմտահայ կյանքում զարգացող իրադարձությունները պատկերելու տեսակետից։

Ուշագրավ է նաև, որ և՛ Օրպելը, և՛ Սուրենը շատ ջերմ վերաբերմունք ունեն «Արշալույսի» նկատմամբ, այնպիսի նախանձախնդրություն, որ կարող էր ունենալ միայն թերթի ճակատագրով ապրող գործիչը։ Թերթի թղթակիցներից և ոչ մեկը այդքան սրտամոտ չի ընդունել զմյուռնահայ հետադիմության բռնացումները առաջադիմական պարբերականի հանդեպ։ Իր առաջին թղթակցության մեջ Օրպելը վրդովմունքով էր նշում «պատգամներու ու սպառնալիքներու»[51] օգտագործումը հետադիմության կողմից, իսկ Սուրենը, ինչպես տեսանք, ցնծություն էր արտահայտում թերթի վերահրատարակման առթիվ կամ դատափետում նրա հրաժարված բաժանորդներին[52] և կամ էլ՝ ողջունում թերթի հասարակական ուղղությունը[53]։

Առհասարակ, ոչ միայն ընդհանրության, այլև մանրամասների մեջ այս զույգ հրապարակախոսների նմանությունը իրավունք է տալիս պնդելու, որ Սուրենը նույն ինքը՝ Օրպելն է, նույն ինքը՝ Ստ. Ոսկանյանը։

Մի հանգամանք ևս. Սուրենի՝ Կ. Պոլսից գրելու ձևը ամենևին չի նշանակում, որ նա իրոք «Արշալույսի»՝ Կ. Պոլսի թղթակիցն է։ Մեր համոզմամբ, դա զուտ մի միջոց էր՝ թելադրված թերթի անվտանգության մտահոգությամբ։ Իր ելույթներում Զմյուռնիայի գավառական ժողովը ծանակող Սուրենը փաստորեն քննադատում էր նաև Մելքիսեդեկին՝ Զմյուռնիայի առաջնորդին։ Այս պայմաններում փոխելով իր հասցեն (ինչպես և Օրպել անունը), Ոսկանյանը շեղում էր հակառակորդների ուշադրությունն «Արշալույսից» և իր՝ պոլսեցի անհայտ թղթակցի վրա հրավիրում նրանց ցասումը։

Զմյուռնահայ ժամանակակից, այլև անցյալի իրականության մասին գրելիս Սուրենը հանդես էր բերում այնպիսի իմացություն և քաջատեղյակություն, որ ինքնին ապացուցում է նրա համաքաղաքացի լինելը։ Այսպես, Սուրենը շատ լավ գիտե, որ Զմյուռնիայի հետադիմականների դրդմամբ որոշ բաժանորդներ հրաժարվել են թերթից[54], գիտե նաև դրա պատճառները, թեև թերթը ոչ մի լուր չի տպագրել այդ մասին։ Սուրենը ծաղր ու ծանակի է ենթարկում Զմյուռնիայի երեսփոխանական ժողովի նիստերը, ընդ որում, հատկանշական այնպիսի մանրամասներով, որ կարող էր անել միայն զմյուռնաբնակը[55]։ Նա ծանրանում է 1873-ին Զմյուռնիայում բորբոքված եդեսյան և հակեդեսյան պայքարի դրվագների վրա, ցույց է տալիս Չիլինկիրյանի անսկզբունքայնությունն այդ հարցում[56]։ Միաժամանակ, նա սուր քննա-

50 Նույն տեղում, № 1329։
51 Նույն տեղում, 1883, № 1225։
52 Նույն տեղում, 1884, № 1303։
53 Նույն տեղում, № 1339։
54 Նույն տեղում, № 1303։
55 Նույն տեղում, № 1304։
56 Նույն տեղում, № 1329։

դատության է ենթարկում Չիլինկիրյանին և Մամուրյանին՝ դեմոկրատական ուղուց շեղվելու և Զմյուռնիայի վերնախավին մերձենալու համար»[57] և դրանով իսկ շարունակում է իր բանավեճը նրանց հետ, որ ծայր էր առել դեռևս 1866-ից։ Զմյուռնահայ իրականության և գործիչների հանդեպ այսպիսի դիրքորոշում կարող էր գրավել միայն Ստ. Ոսկանյանը, եթե նույնիսկ մի պահ ընդունելու լինենք, որ Թերթի պոլսարնակ թղթակիցը զմյուռնացի չէր։ Լինելով «Արշալույս արարատյանի» մերձավոր աշխատակիցը, Ստ. Ոսկանյանը, ամենայն հավանականությամբ, աշխատակցել է նրան նաև հետագայում՝ ընդհուպ մինչև թերթի փակումը՝ 1887 թ.։ Ցավոք, մեր տրամադրության տակ չկան թերթի 1885—1887 թթ. հավաքածուները, որպեսզի խորամուխ լինենք քննարկվող հարցին։

Եղած փաստերն առայժմ իրավունք են տալիս եզրակացնելու, որ Ստ. Ոսկանյանը «Արշալույս արարատյանում» ևս, ինչպես իր պարբերականներում, 1871—1884 թթ. օգտագործել է Հրանա ծածկանունը և ստորագրության եռաստղանիշ ձևը։ 1884-ից Ստ. Ոսկանյանը նույն թերթում հանդես է եկել Սուրեն ծածկանունով։ Բացի այդ՝ Ստ. Ոսկանյանը «Արշալույս արարատյանին» աշխատակցել է ավելի վաղ (1871 թ.) ժամանակից, քան հայտնի էր ցայժմ։

ПСЕВДОНИМЫ СТЕПАНА ВОСКАНЯНА В ГАЗЕТЕ «АРШАЛУЙС АРАРАТЯН»

А. А. ХАРАТЯН

Резюме

Начиная с 1871 г. знаменитый армянский публицист С. Восканян выступал со статьями в газете «Аршалуйс араратян» (Турция, Смирна).

В 1871—1884 гг. С. Восканян пользовался псевдонимами Грант, Сурен, а также подписывался под своими статьями тремя звездочками.

Таким образом, выявляются до сих пор неизвестные статьи С. Восканяна, которые освещают его деятельность в 1871—1884 гг.

57 Նույն տեղում, № 1329 և 1339։